

ԷՋԵՐ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆԵԱՆԻ ԱՐԽԻՒԻՑ (1966-74)

ՍԵԴԱ ԳԱԼՍՏԵԱՆ
sedagalstyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

1960-80ականները Խորհրդային Հայաստանի համար կարելի է համարել ազգային զարթօնքի ժամանակահատուած, շատերի գնահատմամբ՝ «հայաստանեան վերածննդի» դարաշրջան: «*1970-80ականներին արդիւնաբերական աճի տեմպերով Հայաստանը ԽՍՀՄում գրաւում էր 2րդ տեղը*»[1]: «*1960-80ական թ. Հայաստանն առաջատար դիրքեր էր գրաւել թէ՛ գիտութեան եւ թէ՛ կրթութեան ոլորտներում*»[2]: Այսօր ընթերցողին ենք ներկայացնում էջեր այդ տարիներին երկրի ղեկը ստանձնած անձանցից մէկի, 1966-74՝ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի Ա. քարտուղար, Անտոն Քոչինեանի (1913-1990) արխիւից[3], որը 2005ին Հայաստանի պատմու-թեան թանգարանին (ՀՊԹ) նուիրեց նրա հարս՝ Բելա Քոչինեանը: Այն այսօր պահւում է ՀՊԹ նորագոյն պատմութեան բաժնի ֆոնդում՝ 18816 հա-մարի տակ:

Գնահատելի էր տիկին Բելայի մեկնաբանութիւնը՝ արխիւի մասին: Երբ ուրախութեամբ ու նոյնքան զարմանքով հարցրեցի՝ «*այս բոլորը (խօսքը ճամպրուկով լուսանկարների, ալբոմների ձեռագրերի, փաստաթղթերի մասին էր) նուիրու՞մ էք թանգարանին*», նա պատասխանեց. «*Իմ կենդանութեան օրօք եմ ուզում նուիրել, գտնում եմ ամենաապահով եւ արժանի վայրն է, որտեղ կը պահուի այս արխիւը ու կը փոխանցուի սերունդներին* …»[4]: Կարծում եմ չսխալուեց:

Երբ սկսեցի ուսումնասիրել հայոց նորօրեայ պատմութեան, ոչ-բոլորիս համար բաւարար չափով լուսաբանուած Ա. քարտուղարի արխիւը, հասկացայ, որ այն իր խօսքն ունի այսօր կատարուող շատ իրադարձութիւնների մասին, նորովի մեկնաբանելու նախկինում տեղ գտած շատ եզրոյթներ՝

---

[1] *Հայոց պատմութիւն, հտր. 4, գիրք 2*, Զանգակ հրատ., Երեւան, 2016, էջ 122:

[2] Է. Զոհրաբեան, *Գիտութեան զարգացումը Հայաստանում 1960-1980-ական թուականներին*, «Տիր» հրատ., Երեւան, 2016, էջ 14:

[3] Հայաստանի պատմութեան թանգարան, նորագոյն պատմութեան ֆոնդ /ՆգՊֆ/ մմ18816, բաժնի մատեան բ/մ 3402-3764:

[4] Հանդիպումը կայացաւ 2005ին, Ա. Քոչինեանի զաւակի բնակարանում: Արխիւը թանգարանին է նուիրուել հրատարակութեան հեղինակի միջոցաւ:

«ժողովուրդների անխախտ բարեկամութիւն», «եղբայրութիւն», «լենինեան ազգային քաղաքականութիւն» եւն., կարեւորագոյն դէպքեր: Ուշադրութիւնս չէր կարող չգրաւել յատկապէս ազգային զարթօնքի՝ 1965ի դէպքերին ուղղակի եւ անուղղակի առնչուող որոշ փաստաթղթեր, նամակներ, որոնք նաեւ կարեւոր ուղերձ էին պարունակում: Հարուստ նիւթը օգտակար կը լինի իւրաքանչիւր ուսումնասիրողի համար, առարկայական պատկերացում կազմելու այդ տարիներին տիրող մթնոլորտի մասին: Դրանց մանրամասն ուսումնասիրութիւնը, «տողատակերով» ընթերցումը այսօրուայ հեռատրութիւնից նորովի մեկնաբանութիւնների հնարաւորութիւն է ընձեռում, նաեւ՝ լոյս սփռում մի շարք երեւոյթների վրայ: Արխիւից ի յայտ է գալիս որ արցախեան հարցին առնչուող շատ արդիական՝ սահմանազատման, սահմանագծման աշխատանքների հետ կապը ուղիղ գծով առնչուած է այդ օրերին եւ դրանից առաջ կատարուածին: Այս ամէնին կ'անդրադառնանք, երբ ներկայացնենք այդ արխիւի փաստաթղթերը եւ ձեռագրերը: Մինչեւ այդ, փոքր ինչ յետահայեաց կատարենք այդ տարիներին եւ փորձենք վերլուծել որոշ «նրբերանգներ», նորովի բացատրութիւններ տալով ընդունուած տարբեր տեսակէտերին:





«Ինչու՞ եւ ինչպես կառուցուեց ատոմակայանը» յօդուածի սեւագիր ձեռագրի Ա. էջը եւ՝ Ուլուբաբեանի՝ Ղարաբաղը ադրբեջանցիներով բնակեցնելու գաղտնի ծրագրի մասին գրութեան մի էջը

ԱՆՏՈՆ ԵՐՈՒԱՆԴԻ ՔՈՉԻՆԵԱՆ

Ծնուել է 1913ին, Գուգարքի շրջանի Վահագնի գիւղում: 1966 Փետրուարին Հայաստանի կենտկոմի նիստը նրան ընտրում է Հայաստանի Կոմու-

նիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար, ուր մնում է մինչեւ 1974: Նա ուժ ու եռանդ չի խնայել արդիւնաբերական, բնակարանային եւ մշակութա-կենցաղային կառոյցների շինարարութեան ծաւալման, հանրապետութեան քաղաքների եւ գիւղերի բարեկարգման գործում: Նա ամէնօրեայ ուշադրութիւն է նուիրել գիւղատնտեսութեան կարեւորագոյն ճիւղերի՝ խաղողագործութեան, պտղաբուծութեան եւ անասնաբուծութեան զարգացմանը: Մեծ ուշադրութիւն է նուիրել ժողովրդի բարեկեցութեան բարձրացման ուղղութեամբ կուսակցական եւ սովետական իշխանութիւնների մարմինների գործունէութեան բարելաւմանը: Քոչինեանն ընտրուել է Սովետ Միութեան Կոմունիստական կուսակցութեան (ՍՄԿԿ) 19, 20, 21, 22, 23, եւ 24րդ համագումարների պատգամաւոր: ՍՄԿԿ 23-24րդ համագումարներում նա ընտրուել է ՍՄԿԿ կենտկոմի անդամ[5]:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՏՈՄԱԿԱՅԱՆ

Վերջերս՝ 2021 Նոյեմբերին, երբ Երեւանում էր «Ռոսատոմ» (ատոմային ուժանիւթի պետական ընկերութիւն) 2016ից գլխաւոր տնօրէն Ալեքսէյ Լիխաչովը եւ այցի նպատակը Մեծամօրի ատոմակայանի (ԱԷԿ) յետագայ՝ 2026ից յետոյ ծառայութեան ժամկէտի երկարաձգման հնարաւորութիւնների քննարկումներն էին, ինչպէս նաեւ նոր կայանի կառուցման հեռանկարները[6], շատ արդիական է հանրութեանը ներկայացնել Քոչինեանի ձեռագրով մի փաստաթուղթ, որն ամփոփում էր ԱԷԿի կառուցման եւ դրան նախորդող ժամանակահատուածը, «Ինչու եւ ինչպէ՞ս է կառուցուել ատոմակայանը» վերտառութեամբ:

Բ. համաշխարհայինից յետոյ՝ հայերի համար ծանր ժամանակահատուածում անհրաժեշտութիւն էր ուժանիւթի նոր աղբիւրներ գտնելը: Ստաւրոպոլից եկած գազը բաւարարում էր մեր հանրապետութեանը մինչեւ Վրաստանի օգտուելը այդ գազատարից: Սկսուեցին խնդիրներ: Երբ 1960ականներին, Սովետական Միութեան եւ Իրանի միջեւ յարաբերութիւնները լաւացել էին, Իրանի շահը Մոսկուայում առաջարկեց մատչելի գնով գազ վաճառել Սովետական Միութեանը: Միութեան ղեկավարութիւնը օգտուելով շահի յայտարարութիւնից յանձնարարում է պետպլանին ներկայացնել առաջարկութիւն: Հայաստանի կառավարութիւնն իր հերթին ելնելով հանրապետութեան ուժանիւթի ծանր վիճակից օգտուելու այդ հնարաւորութիւնից Հայաստանի կառավարութիւնը յատուկ խնդրանքով դիմում է Միութեան ղեկավարութեանը Իրանից գնել գազ եւ Անդրկովկաս գազ մատակարարող գազամուղն անցկացնել Նախիջեւանով Հայաստանի

---

[5] *Հայկական սովետական հանրագիտարան, հտր. 12*, Յակոբ Մեղապարտի անուան պոլիկրաֆկոմբինատ, Երեւան, 1986, էջ 478:

[6] Աւելի ետք, 2022 Յունուարի 20ին Տուպայում «Ռոսատոմ»ը եւ ՀԱԷԿը ստորագրել են ՀՀում ատոմային ուժանիւթի կառուցման հարցի ուսումնասիրման յուշագիր:

վրայով...: Այդ առաջարկը պաշտպանեց ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ Ալեքսէյ Քոսիկինը: Նա Իրան գնալիս, կանգ առաւ Երեւանում, եղաւ Մարտիրոս Սարեանի արուեստանոցում եւ այլուր, առաջարկեց գազամուղը անցկացնել Հայաստանի տարածքով:

Չկատարուեց Քոսիկինի կարգադրութիւնը եւ պետպլանի նախագահ Բայբակովի ցուցումով գազամուղը անցկացուեց Ադրբեջանով. պաշարի մեծ մասը վերցրեց Ադրբեջանը, իսկ մնացեալը հազիւ էր բաւականացնում Հայաստանին եւ Վրաստանին: Անհրաժեշտ էր անցնել այլընտրանքային ուժանիւթի. այն հիւլէական կայանի կառուցումն էր: Հետաքրքիր փաստեր են արձանագրուած փաստաթղթի մէջ՝ ընդհուպ Քոչինեանի հանդիպումը ակադեմիկոս Ալիխանովի հետ: Շատ գիտնականների մօտ վախ կար ատոմակայանը Հայաստանում կառուցելու, քանի որ Հայաստանը գտնւում էր երկրաշարժային գօտում:

> Մոսկուայում առաջինը դիմեցի մեր հայրենակից, ակադեմիկոս Ալիխանովին: Նա ասաց, որ ափսոս իր ռէակտորը պատրաստ չէ այժմ, պատրաստ է ակադեմիկոս [...] (գաղտնիութեան կարգը չխախտելով չի նշւում ազգանունը - Ս.Գ.) ռէակտորը: Վտանգաւորութեան մասին խօսելիս Ալիխանովը հրաւիրեց ճաշի եւ ասաց, որ միաժամանակ ծանօթանամ չորսհարիւր հազար ռէակտորի [նպատակայարմարութեան] հեղինակի եւ միւս ատոմի մասնագէտների հետ... Նա ծանօթացրեց հաւաքուածներին ռէակտորի հեղինակ Վարոմինի, (ВВР 440) ակադեմիկոս Ա. Ալեքսանդրովի, ատոմային էներգիայի օգտագործման կոմիտէի նախագահ Սլաւսկու, ով յետագայում դարձաւ միջին մեքենաշինութեան նախարար: Այս նախարարութիւնը ժամանակին զբաղուել է ատոմային զինատեսակների եւ ատոմային ոլորտի արդիւնաբերութեան կառավարմամբ: Ալիխանովն ասաց, որ պետպլանը առաջարկում է ընկեր [...] ռէակտորի բազայի վրայ կառուցել Հայաստանում, սակայն հայ ղեկավարները կասկածում են, վախենալով վտանգաւորութիւնից, մանաւանդ որ Հայաստանը սէյսմիկ շրջանում է: Բոլորը միաբերան վստահեցրեցին, որ ոչ մի վտանգ չկայ, իսկ ընկեր Սլաւկին ասաց՝ «եթէ ինձ հարցնես, ես ատոմակայանը կարող եմ դնել Կարմիր հրապարակում»[7]:

Պահպանուել են կարեւոր տեղեկութիւններ Հայաստանի ԱԷԿի կառուցման տեղի շուրջ. «*Հանրապետութեան ղեկավարութեանը առաջարկուեց ատոմակայանը տեղադրել Արազդայանում (այժմ Երասխ), այնտեղ որտեղ այժմ կառուցուել է Սեւակաւան սովխոզը, իսկ սկզբնական շրջանում կանգ առան Արարատի շրջկենտրոնից երեք կմ հեռու Չիման (այժմ Ուրցաձոր) գիւղում, առաջարկելով տեղափոխել գիւղը: Գիւղացիները բառացիօրէն մեծ բողոքներ ուղարկեցին, սրիպուած եղանք փնտռել նոր տեղ*»[8]...:

Նիւթն առիթ հանդիսացաւ նաեւ ծանօթանալու ժամանակի մամուլի հրապարակումներին՝ յատկապէս 1988ին *Փրաւդա* թերթում լոյս տեսած

---

[7] Նպֆ, մմ18816, բ/մ3449, ՀՊԹ էջ 3:

[8] Նոյն էջ 4:

ատոմային ուժանիւթի հարցերով միջազգային գործակալութեան (ՄԱԳԱՏԷ) գլխաւոր քարտուղար Հանս Պլիքսի յօդուածին[9], որտեղ նշւում էր հիւլէական ուժանիւթի առաւելութիւնների մասին:



ЦК КПСС

В соответствии с поручением Секретариата ЦК КПСС нами рассмотрено письмо группы деятелей науки и культуры Армянской ССР, адресованное XXIII съезду КПСС.

В письме ставится вопрос о возвращении Нагорного Карабаха и Нахичеванской АССР Армянской ССР. Авторы письма ссылаются на исторические факты и свое предложение обосновывают экономическими политическими и этническими факторами.

В письме указывается общеизвестный исторический факт о том, что 46 лет тому назад правительство Азербайджанской ССР огласило декларацию о признании этих территорий нераздельными частями Армянской ССР, однако их фактическое присоединение затянулось.

По мнению авторов, возвращение вышеуказанных земель Армянской ССР будет способствовать дальнейшему укреплению братства и дружбы между народами, еще раз продемонстрирует торжество ленинской национальной политики.

Вопросы, поднятые в письме группой деятелей науки и культуры Армянской ССР ставятся не впервые. С многочисленными аналогичными заявлениями и письмами в ЦК КПСС и ЦК КП Армении, особенно за последние годы, обращались большие группы ученых, творческих работников, представителей интеллигенции, рабочих, работников сельского хозяйства, студенчества и другие. Постановка этих вопросов получила широкий отклик и одобрение среди общественности республики. Разделяя подобные настроения, подавляющая часть населения Армянской ССР как в письменной, так и устной форме активно ставят вопрос о возвращении Карабаха и Нахичевани Армянской ССР.



Հիշ. Թեր-Գասպարյանց

ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС
ТОВ. БРЕЖНЕВУ Л.И.

копия: Членам политбюро ЦК КПСС
копия: Первым секретарям ЦК КП Союзных республик.

Мы, группа студентов и аспирантов из ВУЗов гор. Баку вынужденно приехавших из Армении на учебу в город Баку, так как в Армении нет ни одного ВУЗа на азербайджанском языке и поэтому закрыты все двери ВУЗов для азербайджанской интеллигенции в Армении, обращаемся к Вам по очень важному вопросу.

Дело в том, что в последние годы на нашей Родине в Армении подняли голову некоторые Дашнакские элементы и начали сеять национальные распри между Армянами и азербайджанцами. Так в Армении в 1965 году отмечали 50-летие резни армян в Турции и 100 - летие со дня рождения Генерала царской Армии, главаря Дашнакской армии, палача азербайджанского народа, Андраника Озанян. Газеты, радио, телевидение в течение многих месяцев писали и говорили о жизни и "деятельности "Злого деятеля"Дашнакской партии Андраника. Восхваляли его во всю жизнь, возвели в сан "Национального героя", о каких пор дашнакские главари стали друзьями армянского народа и национальными героями, а кто не тогда были врагами армянского народа и продавали интересы армянского народа иностранным капиталам. Кто натравлял наши народы друг на друга, сеял семена распри между нашими народами. Кто убивал и растерзывал безоружных азербайджанцев - детей, женщин, стариков. Кто грабил и варварски уничтожал все азербайджанское от Нахичевани до Араратской долины. История никогда не забудет то зло, которое причиняли Дашнакские главари в том числе сам Андраник азербайджанцам проживающим в Араратской долине Армении.

Все свои пакости тех кто жив и являются живыми свидетелями того злочастного дня весны 1919 года когда Армяне дашнаков в том числе и Андраника ворвались в азербайджанские деревни близкие к гор.Ереван и учинили в них невиданное зверство и погром который не поддаётся описанию. Достаточно сказать, что тот, кто не смог убежать были убиты на место. Больных, стариков и детей собрали в большой дом, обливали керосином и подожгли живьем. Свидетели этой ужасной трагедии по сей день живы, таким образом Андраник для азербайджанского народа был и действовал хуже Гитлера.

Секретариат ЦК КПСС 17.5.1966 № 26/1577

Քոչինեանի եւ Մուրադեանի նամակ-գրութիւնից մէկ հատուած (1966), եւ Բաքուի ուսանողների գրութիւնը Պրեժնեւին (1966)

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑ, ՆԱԽԻՋԵՒԱՆ, ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 50ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

Քոչինեանի արխիւում 3443 համարի տակ հետաքրքիր փաստաթղթեր, գրութիւններ, յատակագծեր, քաղուածքներ են պահւում Ղարաբաղեան Հարցի, Նախիջեւանի, Հայոց Ցեղասպանութեան 50ամեակի միջոցառումների, հայ ժողովրդի ազգային զարթօնքի վերաբերեալ (մօտ 112 էջ):

1965ին լրացաւ Հայոց Ցեղասպանութեան 50 տարին: Հայ ժողովուրդն առաջին անգամ տասնեակ հազարներով դուրս եկաւ երեւանեան փողոց եւ առաջին անգամ նշուեց այդ ազգային մեծագոյն ողբերգութեան տարելիցը[10]: Խորհրդահայերը Հայաստանի իշխանութիւններից պահանջում էին պաշտպանել հայ ժողովրդի իրաւունքները, դատապարտել թուրքերի կազմակերպած Ցեղասպանութիւնը հայոց դէմ եւ հասնել նրա միջազգային ճանաչմանը: Իսկ աշխարհասփիւռ հայութիւնն էլ արդէն «գործի էր անցել», մասնաւորապէս՝ 1965ին հայութեան հեռաւոր ու գործուն գաղթօճախներից

[9] *Правда*, 18 Նոյեմբերի 1988:
[10] *Հայոց պատմութիւն հտր. 4*, Երեւան, 2016, էջ 116:

Ուրուկուայում պաշտօնապէս ճանաչուեց Հայոց Մեծ Եղեռնը: Ազգային այդ «անցանկալի» երեւոյթների դրսեւորման համար մէկ այլ՝ խիստ քաղաքականացուած ենթախորք էլ կար. ԽՍՀՄ եւ Թուրքիայի իշխանութիւնների խորհրդարանական փոխադարձ այցերից հնչած յայտարարութիւնների համաձայն առաջինը հրաժարուելու էր յետագայում որեւէ տարածքային պահանջից: Կարծիք կար, որ նման յայտարարութիւնները եւ դրանց հետեւանքները վերջնականապէս կը հանգուցալուծեն հայութեան կորցրած հայրենիքը երբեւէ ետ վերադարձնելու հարցը եւ կ'իրականանայ Թուրքիայի երկար տարիների բաղձալի երազանքը[11]:

Այս արխիւից ներկայացուող փաստաթղթերից երկուսը՝ հայաստանեան ատենի յիրաւի ազգային սերուցքը հանդիսացող մտաւորականութեան դիմում-նամակներն են ԽՍՀՄ ղեկավարութեանը, իրենով իսկ հայրենանուէր, ինչու չէ նաեւ յանդուգն քայլ: Բացի նամակներում արծարծուող խնդիրներից, ուշագրաւ է թէ ովքեր են այդ գրութիւնների տակ դրել իրենց ստորագրութիւնները: Դժուար չէ նկատել, որ ցուցակում անունները գրեթէ ամբողջութեամբ կրկնւում են վերոնշեալ երկու փաստաթղթերում:

ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ընկեր Լ. Ի. Բրեժնեւին
ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ընկեր Ա. Ի. Միկոյեանին
ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ընկեր Ա. Ն. Քոսիկինին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ընկեր Եա. Ն. Զարոբեանին
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ընկեր Ա. Ե. Քոչինեանին

Այս օրերին (1964 Դեկտեմբեր – Ս.Գ.) Խորհրդային Հայաստանի ողջ մտաւորականութիւնն ու ողջ հայ ժողովուրդը լուրջ տագնապ է ապրում կապուած այն յայտարարութեան հետ, որ վերջին ժամանակներում (1964 Նոյեմբեր) Վիեննայում արեց Թուրքիայի արտգործնախարար Էրկինն այն մասին, թէ Թուրքիայի եւ Խորհրդային Միութեան կառավարութիւնների ներկայացուցիչների միջեւ սոյն թուականի Նոյեմբերին Մոսկուայում կայացած զրոյցի ժամանակ Խորհրդային կառավարութիւնը համաձայնութիւն է տուել, որ ոչ մի տարածքային եւ սահմանային յաւակնութիւն չունի Թուրքիայի հանդէպ:

---

[11] Չի բացառուած, որ 1965 ապրիլեան դէպքերը, Երեւանում տեղի ունեցած ցոյցերը (աննախադէպ երեւոյթ ամբողջատիրական խորհրդային իրականութեան մէջ), Ապրիլի 24ը պաշտօնապէս հայոց Եղեռնի օր ճանաչելն ու Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի կառուցման թոյլտուութիւնը համազգային պայքարի անշրջելի ձեռքբերումներն էին, որոնք հակապետական նպատակներ չէին հետապնդում, միտուած էին իշխանութիւնների առջեւ բացառապէս ազգային հիմնախնդիրների վերհանմանը: Նոյն խորհրդային իշխանութիւնների կողմից «փոխզիջումային» քայլեր էին՝ «եռացող կաթսայից» գոլորշին բաց թողնելը:

Անհանգստանալով, որ նման յայտարարութիւնները, եթէ ոչ պաշտօնական, ապա կիսապաշտօնական ձեւով կարող են տեղի ունենալ 1965 Յունուարին Անկարայում խորհրդային խորհրդարանական պատուիրակութեան այցի, կամ յաջորդ տարուայ Ապրիլին թուրք խորհրդարանական պատուիրակութեան՝ մեր երկիր պատասխան այցի ժամանակ, մենք անհրաժեշտ ենք համարում Ձեր բարձր ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալի վրայ:

Մենք՝ ներքոստորագրեալներս, սոյն նամակով արձագանգելով հայ ժողովրդի եւ նրա մտաւորականութեան միաձայն ցանկութեանը, միանգամայն անհրաժեշտ ենք համարում դիմել Ձեզ, յիշեցնելով որ թուրքական կառավարութեան կողմից կանխամտածուած ձեւով առաջ քաշուած յայտարարութեանը հաւանութիւն տալը հաւասարազօր է իր այն պատմական հողերի հանդէպ հայ ժողովրդի օրինական իրաւունքների ոտնահարմանը, որոնց համար նա իր բազմադարեայ պայքարում ահռելի զոհեր է ունեցել, էլ չենք ասում 1915-1918 թթ. տեղի ունեցած հայերի հրէշաւոր կոտորածների մասին, որի ընթացքում հայ ժողովուրդն իր հին զոհերին աւելացրեց մէկեւկէս միլիոն նորերին միայն այն բանի համար, որ իր զաւակները առաջին կայսերապաշտական պատերազմի ժամանակ ռուսական բանակի շարքերում կամաւոր կռւում էին Թուրքիայի դէմ....

Քանի որ, հայրենազուրկ երկու միլիոն հայեր վստահում են Խորհրդային Միութեանը, այդ իսկ պատճառով, դիմելով Ձեր մարդասիրական զգացմունքներին եւ Ձեր բարձր քաղաքական խորաթափանցութեանը, խնդրում ենք Ձեզ չկանգնել թուրքական ղեկավարների նենգ փորձերի ճանապարհին, որոնց նպատակն է ընդմիշտ օրակարգից հանել հայ ժողովրդի օրինական պահանջները եւ ժողովուրդների յիշողութիւնից ջնջել իրենց նախկինների չլսուած ոճրագործութիւնների հետքերը:

Համոզուած լինելով, որ առանց ուշադրութեան չէք թողնի մեր խնդրանքը, խնդրում ենք ընդունել Ձեր հանդէպ մեր ամենախոր յարգանքի զգացումը:

1. Մ[արտիրոս] Սարեան - ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, Հայկ. ԽՍՀ գերագոյն խորհրդի պատգամաւոր, ԽՍՀՄ գեղարուեստի ակադեմիայի իսկական անդամ, Հայկ. ԽՍՀ ԳԱ իսկական անդամ, Պետական եւ Լենինեան մրցանակի դափնեկիր:
2. Վ[ահրամ] Փափազեան - ԽՍՀՄ ժողովրդական արտիստ
3. Լ[եւոն] Յովհաննիսեան - Հայկ. ԽՍՀ բժշկական գիտութիւնների ակադեմիայի իսկական անդամ, ԳԱ իսկական անդամ, դոկտոր-պրոֆեսոր
4. Պ[արոյր] Սեւակ - բանաստեղծ.[12] [եւ ...50 ստորագրութիւն]:

... Կարծում ենք, այս ամէնը արդիւնք էր հասարակական կեանքի աշխուժացման: Սակայն այստեղ իր դերն ունէր նաեւ կուսակցական ղեկավարութիւնը յանձին՝ Եակով Զարոբեանի[13], ով լինելով կուսակցական գաղափարախօսութեան կրող, ի սկզբանէ կողմ էր ազգային, հայապահպան հարցերի բարձրացմանը Մոսկուայի առջեւ: Նա 1964ին խնդիր է դնում

[12] ՀՊԹ, նպֆ, մմ18816, բ/մ 3443, էջ 3:

[13] ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար 1960-66:

մշակելու հայոց Մեծ Եղեռնի տարելիցը նշելու միջոցառումները, արդիունքում՝ հայոց Մեծ Եղեռնի յուշարձանի կառուցումը[14]:

Սակայն նոյն արխիւում հանդիպում են գրութիւններ՝ Հայաստանում ապրող ադրբեջանցիների մեկնաբանութիւններով: Խորհրդային հասարակարգում, ուր հաւասար իրաւունքներով էին օժտուած տարբեր ժողովուրդներ, ուր տիրում էին «եղբայրական յարաբերութիւններ», «ժողովուրդների անխախտ բարեկամութիւն», անկասկած թերի կը լինէր մեր ուսումնասիրութիւնը, եթէ չներկայացնէինք նաեւ նրանց մեկնաբանութիւնները՝ տիրող մթնոլորտի մասին: Բացառիկ ուշադրութիւն է ներկայացնում 1965ի՝ ազգային զարթօնքի գագաթնակէտում հայաստանաբնակ ադրբեջանցի ուսանողների նամակը ԽՍՀՄ ղեկավարութեանը: Նամակը, որը դժուար չէ կռահել, որ պատուիրուած ու խիստ միտումնաւոր բնոյթ ունի, անստորագիր է, իբրեւ թէ, դրա հեղինակները վախենում են հայերի կողմից հաշուեյարդարից, ինչը է՛լ աւելի է ապացուցում դրա պատուիրուածութիւնն ու միտումնաւորութիւնը:

Եւ եթէ նամակին ծանօթանալիս ընթերցողի մօտ մնում են հարցականներ եւ բացատրութիւն չստացած դրուագներ, դա լրացուցիչ անգամ ապացուցում է այս «փաստաթղթի» պատուիրուած ու կեղծ բնոյթը:
Ստորեւ ներկայացնում ենք այդ նամակից մի հատուած:

ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ[15]
Ընկեր Լ. Ի. Բրեժնեւին
Պատճէն՝ ՍՄԿԿ Կենտկոմի Քաղբիւրոյի անդամներին
Պատճէն՝ Միութենական հանրապետութիւնների ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարներին
Մենք՝ Բաքու քաղաքի բուհերի մի շարք ուսանողներ եւ ասպիրանտներ, ովքեր ստիպուած Հայաստանից Բաքու են եկել ուսման, քանի որ Հայաստանում չկայ ոչ մի բուհ ադրբեջաներէն ուսուցմամբ, այդ իսկ պատճառով էլ փակ են բոլոր բուհերի դռները Հայաստանում ապրող ադրբեջանցի մտաւորականութեան համար, Ձեզ ենք դիմում շատ կարեւոր հարցով:
Բանն այն է, որ վերջին տարիներին մեր հայրենիք Հայաստանում գլուխ են բարձրացրել որոշ դաշնակցական տարրեր եւ ազգային թշնամանք են տարածում հայերի եւ ադրբեջանցիների միջեւ: Այսպես, 1965ին Հայաստանում նշում էին Թուրքիայում հայերի ցեղասպանութեան 50ամեակն ու ցարական բանակի զօրավար, դաշնակցական բանակի պարագլուխ, ադրբեջանցի ժողովրդի դահիճ Անդրանիկ Օզանեանի ծնդեան 100ամեակը: …..
Ի՞նչ նպատակներ էին հետապնդում Հայաստանում Անդրանիկի տօնակատարութիւնների կազմակերպիչները: Նրանք հրահրել եւ հրահրում են ազգամիջ-

[14] 1965 Մարտի 9ին ՀԿԿ կենտկոմի նախագահութիւնը հաստատեց «Հայերի կոտորածի 50ամեակի նախապատրաստման հետ կապուած միջոցառումներ»ի 15 կէտից բաղկացած ծրագիր (ՀԱԱ, ֆ.1, ց.45, գ.18, թ. 4-5):

[15] Ռուսերէնից բոլոր թարգմանութիւնները հեղինակին են, եթէ այլապէս չի նշուել:

եան թշնամանք մեր երկու ժողովուրդների միջեւ: Այդ օրերին յաճախ կարելի էր լսել «Զանգիբասարը կը պատասխանի»[16], որտեղի՞ց են այդ խօսքերը: Բանն այն է, որ դաշնակցական կառավարութեան ժամանակ, ջարդերի օրերին Զանգիբասարը այնպէս էր կողոպտուած, որ դրա շնորհիւ դաշնակցական ղեկավարները իրենց պարտքերը փակեցին: Նրանք խաղում էին թղթախաղ, երբ պարտւում էին, ասում էին «շարունակիր խաղը՝ Զանգիբասարը կը պատասխանի»: Եւ յայտնի էին թէ ինչ մեթոդներով էին գործում... Այս ամէնից յետոյ Անդրանիկը հաւաքեց մեծ հարստութիւն եւ գնաց ովկիանոսից այն կողմ: Ինչու՞ չգնաց Մոսկուա, այլ գնաց ԱՄՆ: Նա փախաւ Հայաստանից, ինչպիսի՞ ազգային հերոս է նա, որ դժուար պահին լքեց իր երկիրը: Մենք էլ ենք ունեցել ռուսական բանակում ծառայող զօրավարներ՝ Ալի Աղա Շահլինսկին, Մեհմանդարովը եւ ուրիշներ, երբ նրանց առաջարկել են գնալ արտասահման, պատասխանել են, որ իրենց ժողովրդից չեն փախչի, ոչ մի տեղ չեն գնայ: Մնացել են ծառայել Խորհրդային իշխանութեանը կազմաւորել ազգային զօրագնդեր:

Հայաստանի բոլոր ժողովուրդներն ապրել են միասնական եղբայրական ընտանիքում: Մենք չենք զգացել, որ ապրել ենք հայերի մէջ, եւ հայերն էլ մեզ օտար չեն համարել, ինչպէս հիմա դա անում են: Բայց այդ բարեկամութիւնը եւ քաղաքականութիւնը կարճ տեւեց: Այդ հանգած նախկին դաշնակցական տարրերը սպասում էին յարմար ժամանակի՝ բարձրացնելու իրենց գլուխները եւ իրենց սեւ գործը շարունակելու համար: Տեղին է նշել, որ նախկին ՀԿԿ կենտկոմի Ա. քարտուղար Եակով Զարոբեանը անձամբ յայտարարել է, որ «թուրքերը» կտրել են իր հօր գլուխը եւ նոյնպէս վարուել իր գերդաստանի հետ եւ նրա յայտնուելը այդ պաշտօնում թոյլ տուեց նախկին դաշնակցականներին աշխուժանալ Հայաստանում ապրող ադրբեջանցիների դէմ: Զարոբեանը անձամբ տուել է ցուցում նորից տպագրել եւ հրատարակել նախկինում արգելուած գրքերը, օրինակ՝ Ռաֆֆի[17]: Ֆրանց Վերֆէլի *Մուսա լեռան 40 օրը* գիրքը թարգմանուել է հայերէն[18] արտասահմանի դաշնակների կողմից եւ վաճառւում է Հայաստանում: Այդ գրքերը թունաւորում են ժողովրդի հոգին, մի ժողովրդի տրամադրում միւսի դէմ:

---

[16] 1919-20՝ կովկասեան թաթարների եւ թուրքերի ընդվզումը Հայաստանի առաջին Հանրապետութեան պետականութեան դէմ յաճախ արտայայտւում էր հակահայ խռովութիւններով՝ Վեդիում, Զանգիբասարում (Մասիսի շրջան) եւ այլուր: ՀՀն սկզբից փորձեց կարգաւորել խնդիրը խաղաղ ճանապարհով. դա, սակայն, ընկալուեց հայկական կողմի թուլութիւն: Հուակ, ճնշուեց խռովութիւնը հայկական բանակի կողմից. այդ քայլերը նամակը մեկնաբանում է ըստ կամս՝ ադրբեջանական հայեցակէտերից ելնելով:

[17] Ռաֆֆի.- Յակոբ-Մելիք Յակոբեան, հայ գրող, հրապարակախօս: Նրա փիլիսոփայութիւնը՝ ազգային միասնութիւնն է: Նա ազգային դժբախտութեան պատճառ նշում է անմիաբանութիւնը:

[18] Ֆրանց Վերֆել.- աւստրիացի գրող եւ հումանիստ, *Մուսա լեռան 40 օրերը* վէպը առանձնակի տեղ է գրաւում նրա ստեղծագործութիւնների մէջ: Վէպի հիմք են ծառայել 1915ի Կիլիկիայի Սուեդիայի շրջանի հայութեան հերոսական պայքարը թուրք ջարդարարների դէմ: Այն արժանացել է տարուայ լաւագոյն վէպի միջազգային մրցանակի: Թարգմանուել է աւելի քան 20 լեզուներով:

Ժամանակակից հայ գրողներից ժողովուրդների մէջ ամենամոլի ատելութիւն սերմանողը Յովհաննէս Շիրազն է, որի գրքերը լցուած են ադրբեջանական ժողովրդի դէմ արհամարհանքի ու ատելութեան զգացմամբ: Շիրազի գործերի մասին Հայաստանի կառավարութեանը յայտնի էր: 1965 Ապրիլի 24ին, երբ նշում էին ցեղասպանութեան 50րդ տարելիցը, նրան վտարեցին Երեւանից Աշտարակ եւ տաս օր պահում էին տնային կալանքի մէջ Աշտարակում, այնինչ նրան պէտք էր ընդմիշտ վերացնել....

Չնայած որ ժամանակաւորապէս հեռացրեցին անկարգութիւնների ու ցոյցերի գլխաւոր ղեկավարին, 1965 Ապրիլի 24ին ցոյցը տեղի ունեցաւ, եւ այն ղեկավարում էին ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչեայ Ներսիսեանի[19] որդին ու անուանի դերասանուհի Մետաքսեայ Սիմոնեանը[20]:

Յովհաննէս Շիրազն ու նրա խումբը գործուն քարոզչութիւն է վարում նաեւ ռուս ժողովրդի դէմ: Նրանք բացայայտ յայտարարում են, որ հայ ժողովրդի գլխաւոր թշնամին ռուսներն են, քանի որ Լենինը ստորագրել է Արեւմտեան Հայաստանից հրաժարուելու եւ այն Թուրքիային յանձնելու մասին որոշում եւ բարեկամական յարաբերութիւններ է հաստատել Աթաթուրքի հետ: Նրանք նաեւ կոպիտ արտայայտութիւններ են անում ընկ. Փոտկորնու[21] հասցէին, ով վերջերս բարեկամական այցով եղաւ Թուրքիայում եւ նպաստեց խորհրդա-թուրքական յարաբերութիւնների մերձեցմանը: Նրանք նաեւ յայտարարում են, որ ռուսները իրենց խանգարում են հաշուեյարդար տեսնել ադրբեջանցիների հետ, փորձում են անջատել Հայաստանը Ռուսաստանից, վերադարձնել "հայկական հողերը" եւ ստեղծել "Մեծ Հայաստան": Ցոյցերի օրը նրանք ցանկացել են պայթեցնել Երեւանի կենտրոնում գտնուող Լենինի ու Ազիզբեկովի արձանները, սակայն համապատասխան մարմինները ժամանակին իմացել են այդ մասին եւ կանխել: ...Տեղին է բերել այսպիսի հաշուարկ. մինչեւ 1935 Երեւանի բնակիչների 50%ը ադրբեջանցիներ էին, 1965ին Երեւանում մնացել էին ադրբեջանցիների միքանի ընտանիքներ, ովքեր այդ օրերին պատրաստ էին լքել Երեւանը...[22]:

Հաշուի առնելով Հայաստանում ստեղծուած իրավիճակի լրջութիւնը, խնդրում ենք Ձեզ.-

1. Նշուած փաստերի իրականութեան ստուգման համար ստեղծել ԽՄԿԿ կենտկոմի յանձնաժողով:
2. Օգնել Հայաստանի նոր ղեկավարութեանը արմատախիլ անել հանրապետութիւնում գլուխ բարձրացրած այդ ազգայնամոլական գաղափարախօսութիւնը:

---

[19] Հրաչեայ Ներսէսի Ներսիսեան.- կինոյի եւ թատրոնի անուանի դերասան: 1956ից ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, որդին՝ Լեւոն Ներսիսեանը գրականագէտ, ԵՊՀ դասախօս, դոցենտ:

[20] Մետաքսիա Սիմոնեան.- կինոյի եւ թատրոնի հայ խորհրդային դերասանուհի, մանկավարժ, ԽՍՀՄ ժող. արտիստ:

[21] Նիքոլայ Փոտկորնին եղել է ատենի ԽՍՀՄ խորհրդարանի նախագահը:

[22] Սակայն ըստ 1926ի մարդահամարի տուեալների Հայաստանում 84,5%ը հայեր էին, միայն 9,5%ը ադրբեջանցիներ (Демоскоп Weekly - Приложение. Справочник статистических показателей. (demoscope.ru) (Տեղեկագիրք վիճակագրական ցուցանիշերի):

3. Ցոյց տալ Հայաստանի նոր ղեկավարութեանը, թէ ինչպէս հանրապետութեան բոլոր պետական հաստատութիւններում միաւորել բոլոր ազգերի ներկայացուցիչներին:
4. Հանրապետութիւնում վերականգնել նախկինում փակուած ադրբեջանական ուսումնական հաստատութիւնները[23] բացել ադրբեջանական ֆակուլտէտներ առկայ բուհերում:
5. Ուժեղացնել գաղափարախօսական աշխատանքը հանրապետութիւնում եւ ժողովրդին բացատրել ազգայնամոլական կազմակերպութիւնների հայեացքների վնասակարութիւնը:
6. Եթէ այս միջոցառումներն անհնար է իրականացնել, խնդրում ենք Ձեզ կազմակերպել տեղահանութեան հարցերով պետական յանձնաժողով, վճարէք մեր բոլոր կապիտալ ներդրումները գիւղերում եւ տեղափոխել ադրբեջանական գիւղերը Հայաստանից Ադրբեջան:

Մենք չենք ստորագրում, քանի որ վախենում ենք հաշուեյարդարից եւ չենք նշում յետադարձ հասցէն, քանի որ ահաբեկիչները հսկողութեան տակ են պահում իւրաքանչիւրին, ով ուղղակի կամ անուղղակի ձեւով գնում է նրանց դէմ:

Ընթերցելով նիւթը, յանգում ես այն եզրակացութեան, որ այդ «մտատրականները» ապրելով Հայաստանում այնքան ազատ են եղել եւ ճնշումներից զերծ, որ կարող էին քաղաքական յայտարարութիւններ անել հայ ազգային հերոսների, հայ ժողովրդական բանաստեղծների, գրողների հասցէին, վառ գոյներով ներկայացնել իրենց «ճնշուած» վիճակը, պահանջել կրթական համակարգում ադրբեջաներէնով ուսուցանող բուհեր բացել, հակառակ դէպքում սպառնալ՝ տեղափոխել ադրբեջանական գիւղերը:

Արխիւում պահուել է նաեւ լեհ գրող Պոկտան Կեմպարսքու «Նամակ իմ հին թուրք ծանօթին» տպագիր նամակը, Եղեռնի 50ամեայ տարելիցի առթիւ: Ի. դարը համարելով ամենամեծ ոճրագործութիւնների, միեւնոյն ժամանակ ամենամեծ փոխհատուցումների դար, Կեմպարսքին հարցնում է. «*ինչու՞ հայերին նահատակելը պիտի պարգեւի արժանանայ, իսկ լեհերին եւ հրեաներին նոյն ձեւով նահատակելը ճանաչուած է իբրեւ մարդկութեան դէմ գործած ոճիր...*»[24]:

Ներկայացնենք նաեւ արխիւում պահուող որոշ նամակ-գրութիւններ, Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի հիմնախնդրի վերաբերեալ:

Ադրբեջանական ԽՍՀ, ԼՂԻՄ եւ Շամխորի, Խանլարի, Դաշկեսանի, Շահումեանի շրջանների հայ աշխատաւորներից Խորհրդային Միութեան ԿԿ կենտկոմի քարտուղար Խրուշչովին ուղարկուել է նամակ-գրութիւն 1962 Մարտին: Գրութեան մէջ ներկայացուած է կեանքի ծանր պայմաններից յուսահատութեան հասած իրավիճակ, որտեղ պարզ երեւում է Ադրբեջանի կողմից տարուող ազգայնական քաղաքականութիւնը եւ այդ պատճառով

[23] Գործել են մօտ 32 ադրբեջանալեզու դպրոցներ:
[24] Պոկտան Կեմպարսքի, «Նամակ իմ հին թուրք ծանօթին», էջ 13, նպֆ, բ/մ 3443:

հայ բնակիչները որոշել են դիմել արդարութիւնը վերականգնելուն: Նրանք գրում են.

...Անյիշելի ժամանակներից Քուռի, Արաքսի եւ Սեւանայ լճերի միջեւ ընկած մեր հողերը, որոնք պատմականօրէն յայտնի էին «Արցախ» անուամբ, միշտ եղել են Հայաստանի անբաժան մասը: Մենք չենք սխալուել, կարծելով, որ լենինեան ազգային քաղաքականութիւնը կը յաղթանակի եւ հայերով բնակեցուած Ղարաբաղի տարածքը կը յանձնուի Խորհրդային Հայաստանին: Եւ, իրօք, 1920 Դեկտեմբերի 1ին խորհրդային Ադրբեջանը ընդունեց յայտարարութիւն, որի համաձայն Ղարաբաղն ու Նախիջեւանը տրւում էին խորհրդայնացուած Հայաստանին:

Սակայն այդ արդար, լիովին եղբայրական որոշումը ի կատար չածուեց: 1921 Մարտին, Թուրքիայի հետ պայմանագրով Նախիջեւանը մտաւ Ադրբեջանի ԽՍՀ կազմի մէջ, Ղարաբաղի լեռնային մասին 1923ին տրուեց ինքնավարութիւն Ադր. ԽՍՀ սահմաններում, իսկ Շամխորի, Խանլարի, Դաշկեսանի եւ Շահումեանի շրջանները, որոնց բնակչութեան մօտ 90 տոկոսը կազմում էին հայերը, ուղղակի մտան Ադր. ԽՍՀի մէջ: Այդպիսով, Ղարաբաղի հայերը հեռացուեցին Հայկական ԽՍՀից, իսկ ինքնավարութիւնը չէր ներգրաւում բոլոր հայկական շրջանները...

Ինքնավար մարզի իրաւունքները աստիճանաբար կրճատուեցին, իսկ ներկայումս հաւասարուել են զրոյի: 1) Ստեփանակերտի հացի գործարանը ենթարկւում է Աղտամին՝ 40 կմ. հեռաւորութեան վրայ գտնուող ադրբեջանական շրջկենտրոնին: Աղտամի շրջանից կազմակերպւում է Ստեփանակերտին հացի մատակարարումը... 2) Մարզի մարզային առողջապահութեան բաժինը ենթարկւում է Աղտամին: Մարզի դեղատները նոյնպէս ենթարկւում են Աղտամին. 3) Շինարարական վարչութիւնը ենթարկւում է Մինկեչաւրին, որը Ստեփանակերտից հեռու է 120 կմ.: Լաւագոյն *մեխանիզացիան* ու մեքենաները գնում են Մինկեչաւր, իսկ անպիտան, շարքից դուրս եկած մեքենաները բաժին են հասնում Ստեփանակերտին. 4) Մարզի մետաքսի կոմբինատը, որն ունի 3000 աշխատող (մարզի միակ հզօր ձեռնարկութիւնը) դրեցին Ստեփանակերտից 160 կմ. հեռու գտնուող Նուխայի ենթակայութեան տակ. 5) «Սոյուզպեչատ»ի մարզային բաժինը 1962 Մայիսից տեղափոխեցին Աղտամ: Աղտամը որոշում է, թէ մենք ինչ կարդանք. 6) Ստեփանակերտի ցեմենտ-բետոնի գործարանը ենթարկւում է 60 կմ. հեռու գտնուող Պարտայի շրջանին, որը ոչ մի կապ չունի գործարանի հետ: 7) «Թար-Թաո» ՀԷԿի շինարարութեան խնդիրը ներառուած էր յետպատերազմական հնգամեակի մէջ, սակայն մինչեւ օրս լիովին կատարուած չէ... 11) Կրթութիւնն ու մշակոյթը անկման մէջ են: Ստեփանակերտում գոյութիւն ունեցող երկամեայ ուսուցչական հկիմնարկը վերացուել է, փակուել է երաժշտական դպրոցը....

Փորձեր էին արւում ժողովրդի դժգոհութիւնը լուծելու, սակայն անթոյլատրելի միջոցներ էին կիրառում դրա համար: Օրինակ, Ջ. Բաղիրովը, (Ադրբեջանի Կոմկուսի նախագահը մինչև 1953 – Ս.Գ.) Ստեփանակերտում կուսակտիւի ժողովին առաջարկել էր.- ով ճիշտ չի համարում Ղարաբաղը Ադրբեջանի կազմում՝ թող լքի դահլիճը: Հասկանալի էր ինչով կ'աւարտուէր այս քայլին հետեւելը ...եւ այդ հողի վրայ ամէն անգամ ծագում են տհաճ ազգամիջեան վէճեր: Մենք խնդրում ենք անյապաղ լուծել Լեռնային Ղարաբաղի եւ նրան յարող բոլոր հայաբնակ

շրջանների՝ Հայաստանի ԽՍՀին միացնելու, կամ ՌՍՖՍՀ կազմի մէջ մտցնելու հարցը: 1962 Մարտ[25]:

Շատ կարեւոր մի փաստաթուղթ եւս ղարաբաղեան հարցի շուրջ. այն տպագրւում է առաջին անգամ.-

ԽՄԿԿ անդամ Երուանդ Յովհաննէսի Յովհաննիսեանի, ով ծնուել է Շամքորի շրջանի Բադաքենդ գիւղում, 1964 Նոյեմբերին գրել է նամակ *Փրաւդա* թերթի գլխաւոր խմբագրին, սակայն նամակը չեն տպագրել, նրան ուղարկել են յղում Լենինից՝ «պէտք է մտածել ներկայի մասին, այլ ոչ թէ վերադառնալ անցեալին»: Համաձայն չլինելով այս դրոյթին Յովհաննիսեանը գրում է, որ դա սուտ է, որ Լենինի բոլոր եզրահանգումները հիմնուած են անցեալի դասերի վրայ: Եւ ի՞նչ անցեալի մասին է խօսքը, երբ պանթուրքիզմի քաղաքականութեան արդիւնքում 3 մլն. հայեր ցրուած են ամբողջ աշխարհում: Այժմ՝ 1965 Մարտի 20ին գրում է յաջորդ նամակը՝ *Փրաւդա* թերթի գլխաւոր խմբագրին, գրած նամակից երեւում է արցախեան հարցի լուծման մէկ այլ կողմը:

Որոշ ընկերներ գտնում են, որ տարբերութիւն չկայ այն բանում, որ «որոշ հայկական գիւղեր» գտնւում են Հայկական ԽՍՀում, կամ Ադր. ԽՍՀում, ասելով է, թէ՝ ե՛ւ այնտեղ, ե՛ւ այստեղ կոմունիզմ է կառուցւում, խորհրդային իշխանութիւն: Սակայն նման մտածողութիւնը ժողովրդին հասցնում է յուսահատութեան: Եթէ 'միեւնոյն է', ապա չէին լինի ազգային հանրապետութիւնները: Եւ նրանք դեռ երկար կը գոյատեւեն: Դա անհրաժեշտութիւն է: Սակայն գլխաւորն այն է, որ Ադր. ԽՍՀում հայկական շրջանները չեն զարգանում, կոլխոզները ետ են մնում, ադրբեջանցի ղեկավարները, միտումնաւոր կամ ոչ, ճնշում, ստորացնում են ողջ ժողովրդի մարդկային արժանապատւութիւնը.

Յովհաննիսեանը բերում է մէկ օրինակ՝

Մեր Բադաքենդ գիւղը 1962ին չէր կատարել հացահատիկի մթերման պլանը, սակայն 60 տոննա թողել էր կոլտնտեսականներին բաժանելու համար: Շրջկոմի առաջին քարտուղարը կնքեց ամբողջ ցորենը, բերեց մեքենաները եւ տարաւ ամբողջ հացը: Երբ մարդիկ յանդիմանեցին թէ ժողովուրդը առանց հաց սովամահ կը լինի, այդ լկտին պատասխանեց «Թող մի Բադաքենդ էլ չլինի, դրանից Ադրբեջանը չի տուժի»:

Յովհաննիսեանը շարունակում է թէ բողոքելն անիմաստ է, ու՞մ բողոքես, վերջում բողոքդ հասնում է այն մարդուն, ում ուղղուած էր բողոքդ: Արդիւնքում բողոքողը պէտք է հեռանայ, եւ նշում, որ 1962ին գիւղից Հիւսիսային Կովկաս են հեռացել 65 ընտանիք ու հաւաստում՝ «*Այս վիճակը Ղարաբաղի բոլոր հայկական գիւղերում է: ... Հայերի պահանջը՝ Ղարաբաղի (ԼՂԻՄ եւ յարակից շրջանները) Հայկական ԽՍՀին միացնելը միանգամայն արդարացի է եւ համապատասխանում է ազգերի հաւասարութեան ԽՄԿԿ լենինեան ազգային քաղաքականութեանը: Եւ այդ ճչացող*

[25] «ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ, Խորհրդային Միութեան Կոմկուսի ԿԿ քարտուղար ընկ.Ն.Ս. Խրուշչովին», Քոչինեանի արխիւ, նպֆ, մմ 18816, բ/մ 3443 ՀՊԹ: Բնագիրը՝ ռուսերէն:

անարդարութիւնը պէտք է վերացնել, իսկ այդ գործում Փրաւտան պէտք է ասի լենինեան ճշմարտութիւնը..»[26]:



Копия:

ПЕРВОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС

товарищу БРЕЖНЕВУ Л.И.

ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР

товарищу МИКОЯНУ А.И.

ПРЕДСЕДАТЕЛЮ СОВЕТА МИНИСТРОВ СССР

товарищу КОСЫГИНУ А.Н.

СЕКРЕТАРЮ ЦК КП АРМЕНИИ

товарищу ЗАРОБЯНУ Я.Н.

ПРЕДСЕДАТЕЛЮ СОВЕТА МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

товарищу КОЧИНЯНУ А.Е.

В эти дни вся интеллигенция Советской Армении и весь армянский народ переживает серьезную тревогу в связи с заявлением, сделанным в последнее время в Вене Министром иностранных дел Турции Эркином о том,что во время бесед между представителями правительств Турции и Советского Союза, состоявшихся в Москве в ноябре с/г. Советское правительство дало согласие,что не имеет никаких территориальных и пограничных претензий к Турции.

Беспокоясь, что подобные заявления, если в неофициальной, то в полуофициальной форме могут иметь место во время визита советской парламентской делегации в Анкару в начале января 1965 года или ответного визита турецкой парламентской делегации в

Подлежит возврату вместе с постановлением

СТРОГО СЕКРЕТНО

К прот.С-та ЦК КПСС
№ 7, п.21с

Копия

XXIII СЪЕЗДУ КПСС

Мы понимаем все те большие проблемы внутреннего и международнооо значения, которые стоят перед XXIII съездом КПСС и Советским правительством, тем не менее представляем Вашему вниманию и решению вопрос, затрагивающий основы существования целого народа, который является суверенным членом многонационального Советского Союза, народа, пожертвовавшего сотнями тысяч своих сыновей для установления Советской власти, для его победы над врагами, для славы Советского оружия.

Мы исходим из основ марксизма-ленинизма. Еще в предисловии к итальянскому изданию "Манифеста" в 1893 году Энгельс писал: "Без восстановления независимости и объединения каждого отдельного народа не может быть ни международного объединения пролетариата, ни мирного и сознательного сотрудничества этих народов для достижения общих целей". В связи с этим В.И.Ленин писал: "Переустроив капитализм в социализм, пролетариат создаст возможность устранения национального гнета; эта возможность превратится в действительность-"только" - "только" - при полном проведении демократии во всех областях, вплоть до определения границ государства сообразно "симпатиям" населения..." (Сочинения, т.22, стр.311).

Эти установки Ленина остались неосуществленными в Советском Союзе только по отношению к Армении.

В то время, когда лилась кровь армянского народа от рук турецких палачей, на I съезде Советов прозвучал голос великого Ленина в защиту прав и интересов малых и угнетенных народов. В.И.Ленин говорил, что когда большевики придут к власти, они незамедлительно декларируют право Западной Армении на политическое самоопределение и государственную независимость. И действительно, 31 декабря 1917 года великим Лениным был подписан декрет "О Турецкой Армении", которым

Նամակ ԽՄԿԿ քարտուղար Բրեժնևին, ԽՍՀՄ ԳԽ Նախագահ՝ Միկոյեանին եւ մտաւորականների գրութիւնը 23րդ համագումարին

Բագրատ Ուլուբաբեանը, ով 1960ականներին Լեռնային Ղարաբաղի գրողների միութեան մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղարն էր, գրում է, որ Լեռնային Ղարաբաղը ադրբեջանցիներով բնակեցնելու մի գաղտնի ծրագիր է իրականացւում, որի կենսագործողները կանգ չեն առնում ոչնչի առջեւ:

> Տարէց-տարի աւելացնում են [հանրապետութեան ղեկավարները] ոչխարաբուծութեան պլանները, հաստատ համոզուած լինելով, որ հայերն այս բնագաւառում համարեա չեն աշխատում եւ ոչխարապահներ պէտք է հրաւիրուեն հարեւան շրջանների ադրբեջանցիներից: Միայն այս ճանապարհով Ղարաբաղի բոլոր գիւղերը, բացառութեամբ հանրայայտ Ճարտարի, լցուել են ադրբեջանցիներով:
>
> Երկու տարի չկար, ինչ մարզգործկոմի նախագահի տեղակալ էր նշանակուել Բաքուից գործուղուած Սեդրա Սէիդալիեւը, որն իբր ղեկավարում էր առողջապահութիւնը, առեւտուրը եւ շինարարութիւնը: Նա արդէն հասցրել էր այդ բնագաւառների համար աշխատողներ հրաւիրել Ղարաբաղից դուրս ապրող ադրբեջանցիներից: Դա էր պատճառը, որ Ղարաբաղի բոլոր դեղատներում աշխա-

[26] Քոչինեանի արխիւ, *Փրաւդա* թերթի գլխաւոր խմբագրին, աշխատակիցներին, 1964», բմ 3443, ՀՊԹ:

տում էին հիմնականում ադրբեջանցիներ: Հասարակական սննդի կէտերը եւս նրանցն էին: Շինմոնտաժային աշխատանք կատարող համարեա բոլոր բանուորները եւս ադրբեջանցիներ էին: Շուշիի շրջկոմի առաջին քարտուղար գործուղուած Աթաքիշիեւի գործուն նախաձեռնութեամբ Շուշիում կառուցուած բոլոր առողջարանների եւ հանգստեան տների աշխատողները Բաքուից էին: Ղարաբաղի հայերը, զզուած իրենց վիճակից եւ յուսահատ թողնում են իրենց աւանդական հողը, տուն-տեղ եւ հեռանում: Միայն Ստեփանակերտից (որի բնակչութիւնը 26,200 է, 1965ին հեռացել է 1062 մարդ, Հադրութի շրջանից՝ շուրջ 2000 մարդ) իսկ այս 2000ի տեղ եկել են ադրբեջանցիներ, այդ պառճառով էլ նուազման թիւը կազմում է 214 մարդ: Դրութիւնն այդպէս է նաեւ Շուշուայ, Մարտունու եւ Ստեփանակերտի շրջանների գիւղերում[27]:

Ուլուբաբեանն աւելացնում է, որ ղարաբաղցի հայերի բողոքներին ու դժգոհութիւններին Ադրբեջանի ղեկավարները պատասխանում են սուտ խոստումներով եւ մարզի տնտեսութեան ու մշակոյթի զարգացման հեռանկարներ ապահովող անիրականանալի որոշումներով: ԽՄԿԿ կենտկոմի յանձնաժողովը Բաքուի դրաձոների հետ, քաղբիւրոյին զեկուցել է, թէ՝ «*Լեռնային Ղարաբաղում լուրջ ոչինչ չկայ, թերութիւններ են, որոնց նմաններն ուրիշ տեղերում աւելի շատ կան...պէտք է յուսալ Ադրբեջանի ղեկավարները կարճ ժամանակում կը վերացնեն այդ սխալներն ու թերացումները*»[28]:

Ինքնավար մարզի եւ նրա հայ ազգաբնակչութեան դէմ անօրինական, վնասակար հրահանգների թուարկումը կարելի է շարունակել, սակայն նշուած մասնակի տուեալներն էլ բաւարար բնութագրում են մարզի բնակչութեան անելանելի վիճակը: Ուղղակի վարում էր ազգայնամոլական, պանթիւրքիստական քաղաքականութիւն, որը լիովին ընդունուել էր հանրապետութեան ղեկավարութեան կողմից: Այդ քաղաքականութիւնը ինքնավար մարզից դուրս հայկական շրջաններում՝ Շամքորում, Շահումեանում, Խանլարում, Դաշքեսանում աւելի տհաճ ձեւեր է ընդունում: Լեռնային Ղարաբաղը բնակեցւում էր ադրբեջանցիներով:

Կարծում ենք միակողմանի կը լինէր մեր եզրակացութիւնը, եթէ միեւնոյն ժամանակ չուսումնասիրէինք նաեւ Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի եւ ադրբեջանական կառավարութեան կողմից հաստատուած ԼՂԻՄի տնտեսութեան զարգացման եւ մշակութակենցաղային սպասարկման բարելաւման միջոցառումների մասին գրութիւնը, որտեղ նշւում են այն թերութիւնները, որոնց հանդիպել ենք նախորդ գրութեան մէջ եւ խոստանում էին շտկել դրանք: Կարելի է եզրայանգել, որ այս գրութիւնը վառ վկայութիւն է

---

[27] Բ. Ուլուբաբեան, «Պատմական եւ տեղեկատուական նիւթեր»՝ Քոչինեանի արխիւ, բմ3443, էջ 5,ՀՊԹ:

[28] Բ. Ուլուբաբեան, *Արցախի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը*, Մ. Վարանդեան հրատ., Երեւան, 1994, էջ 261:

Ղարաբաղի հայ աշխատաւորների կողմից բերուած փաստերի ճշմարտացիութեան: Թուարկենք դրանցից մի քանիսը.-

...Չափազանց անբաւարար էր տարւում կապիտալ շինարարութիւնը: Մարզի կոլտնտեսութիւններում 5 ամսուայ մէջ անցեալ տարուայ համապատասխան ժամանակաշրջանի համեմատ խոշոր եղջերաւոր անասունների գլխաքանակը պակասել է 3312 գլխով, խոզերինը՝ 863, ոչխարներինը եւ այծերինը՝ 3254 գլխով... **Արդիւնաբերութեան, փոխադրամիջոցների գծով** - ժողտնտխորհին եւ Ադրբեջանական ՍՍՌ Պետպլանին առաջարկուել է 1960ականների շինարարութեան ծրագրերում նախատեսել Ստեփանակերտ քաղաքում օրական 20 տոննա հացաբուլկեղէնի եւ 2 տոննա հրուշակեղէնի թողարկման կարողութեամբ հացի գործարանի շինարարութիւնը... 1963-65՝ պէտք է ընդլայնել Ղարմետաքսկոմբինատի գործուածքային ֆաբրիկան, լրացուցիչ կերպով տեղադրելով 400 գործուածքային դազգահներ: Յանձնարարուած էր 1961-1965 պլաններում նախատեսել Մարտակերտի սովխոզում 200 տոննա խաղողի վերամշակման համար նախատեսուող նախնական գինեգործութեան շինարարութիւնը... **Հանրային եւ մշակութակենցաղային շինարարութեան գծով** 1964ին նախատեսում էին Ստեփանակերտի, Շուշուայ, Մարտակերտի, Մարտունու էլեկտրացանցի վերանորոգումը, բաղնիքի շինարարութիւնը Շուշիում եւ Ստեփանակերտի հիւրանոցի ընդլայնումը: Հադրութում՝ 35 տեղանոց հիւրանոցի շինարարութիւնը: Առաջարկուած էր Ադրբ. հանրային տնտեսութեան նախարարութեանը պետպլանի հետ միասին 2 ամսուայ ընթացքում ներկայացնել առաջարկներ Եւլախ-Աղտամ-Ստեփանակերտ-Շուշի գազամուղի նախագծման եւ շինարարութեան հնարաւոր ժամկէտերի մասին: Առաջարկուած է նախատեսել 1963ին Ստեփանակերտ քաղաքում 960 տեղանոց միջնակարգ դպրոցի եւ այլ դպրոցների շինարարութիւնը... 1963 Յունուարից աւելացնել **հայերէն լեզուվ** կատարուող հանրապետական հաղորդումների ծաւալը 20 րոպէով: **Կապի գծով –** Ադրբեջանական ՍՍՌ կապի նախարարութեանը առաջարկուած է Ստեփանակերտ քաղաքում գործող մեքենական կայանը հասցնել մինչեւ 1500 համարի: Ռադիոհաղորդումների ծրագրի լրիւ հաղորդման համար 1963ին կառուցել Ստեփանակերտ-Շուշի կապի գիծը... **Ճանապարհաշինութեան գծով** - Ստեփանակերտ-Տեղձոր-Ջանեաթաղ-Հոռաթաղ-Մարտակերտ ճանապարհը պէտք է մտցնել հանրապետական նշանակութիւն ունեցող ճանապարհների ցանցի մէջ: **Փոխադրամիջոցային շինարարութեան գծով** - Ջրային տնտեսութեան նախարարութեանը առաջարկուած էր 1963ի ծրագրի մէջ մտցնել Դաշբուլաղ, Խոջալու, Նորագիւղ եւ այլ գիւղերի, Ղարգինտրեստի սովխոզի եւ Ղարաբաղի *զոնալ* փորձակայանի դաշտերին ջուր մատակարարելու նպատակով Խոջալու–Չայգետի ձախափնեայ կողմից ջրանցք անցկացնելու հետազօտական աշխատանքները եւ այլն...[29]:

Այսինքն այս հարցերից եւ ոչ մէկը լուծուած չէ, սրանք բոլորը դեռեւս առաջարկութիւնների մակարդակով էին եւ այստեղ ապրող հայ բնակչութիւնը իզուր չէր իր ձայնը փորձում լսելի դարձնել առօրեայ, գործելու պայմաններ

[29] *Սովետական Ղարաբաղ*, օրգան Ադրբեջանի ԿԿ ԼՂԻՄ մարզսովետի, 20 Յուլիս 1962 (նպֆ բմ3443):

ակնկալելով: Իսկ եթէ այս ամէնին գումարուի ազգային խտրական քաղաքականութիւնը, կարծում ենք պատկերը կ'ամբողջանայ:

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ

Մէկ այլ փաստաթուղթում, որն ուղղուած է ԽՄԿԿ 23րդ համագումարին «Յուժ գաղտնի» գրութեամբ (1966), պահպանուել է կենտկոմի քարտուղարութեան թիւ 7, կէտ 21րդի արձանագրութիւնը, որտեղ մտաւորական գործիչները մէջբերում են Լենինի դրոյթները... ընդհուպ մինչեւ՝ «***պետութիւնների սահմանների որոշումը համաձայն ազգաբնակչութեան «համակրանքի»***[30]: Սակայն այս դրոյթները չգործեցին միայն Հայաստանի համար:

Հայերի ազգային շահերը ոտնահարուեցին նաեւ Անդրկովկասի երեք հանրապետութիւնների սահմանների որոշման ժամանակ, ըստ երեւոյթին ոչ առանց Թուրքիայի մասնակցութեան: Մինչ այսօր անհասկանալի է, ի՞նչ սկզբունքով է կատարուել տարածքային սահմանազատումը 3 անդրկովկասեան հանրապետութիւնների միջեւ: Հաշուի առնուած չեն ո՛չ պատմական, ոչ էթնիկ, ո՛չ տնտեսական, ոչ այլ փաստեր 3 հանրապետութիւնների սահմանագծման ժամանակ: Հայաստանից անջատուել են նրա պատմական, էթնիկ շրջանները, որոնց բնակչութեան 80-85% հայեր են եղել: Խօսքը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի, որի մի մասը առանձնացուել է ԼՂԻՄի մէջ, իսկ միւս մասը՝ Շահումեանի, Խանլարի, Դաշքեսանի եւ Շամխորի շրջանները, անգամ չեն մտել ԼՂԻՄ կազմի մէջ: Նոյնը կարելի է ասել Նախիջեւանի մասին որը կազմելով տարածքային ամբողջութիւն Հայկական ԽՍՀ հետ, առանձնացուել է ինքնավար ԽՍՀի անհասկանալի, Խորհրդային Միութիւնում որեւէ այլ տեղ չկիրառուող, մայրաքաղաքային սկզբունքով... Արդէն հինգերորդ տասնամեակն է, ինչ ոմանք պնդում են, թէ հայ ազգաբնակչութեամբ հայկական տարածքների՝ հարեւան հանրապետութիւնների կազմի մէջ մտնելու փաստը ոչ մի նշանակութիւն չունի, քանի որ թէ՛ այնտեղ, եւ թէ՛ այստեղ կոմունիզմ են կառուցում, որ մեր պայմաններում սահմանները ոչ մի նշանակութիւն չունեն եւն.: Իսկ դա ոչ այլ ինչ է, քան մոլորութիւն..: Բազմաթիւ անգամներ հազարաւոր նամակներով Ղարաբաղի ժողովուրդը իր անիրաւահաւասար վիճակի մասին դիմել է Խորհրդային կառավարութեանը եւ ԽՄԿԿ կենտկոմին: Պատահական չէ, որ 45 տարուայ ընթացքում ԼՂԻՄի եւ միւս հայկական շրջանների ժողովուրդը ոչ միայն չեն աճել, այլ համեմատած 1939ի՝ նուազել են: Եւ այսօր նրանք զանգուածաբար լքում են իրենց հայրենիքը: Էլ ու՞մ կարող է դիմել ժողովուրդը՝ արդարութեան վերականգնման հարցում օգնութիւն խնդրելու, եթէ ոչ՝ խորհրդային կառավարութեանը, հարազատ Կոմունիստական կուսակցութեանը ...Դիմում ենք կուսակցութեան պատմական 23րդ համագումարին, ԽՄԿԿ լենինեան կենտկոմին եւ մեր կառավարութեանը՝ Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայկական ԽՍՀին միացնելու խնդրանքով: Միայն այս ձեւով կը վերականգնուի իրաւահաւասարութիւնը, լենինեան եղբայրութիւնը, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամութիւնը: Հայ ազգաբնակչութեամբ հայկական տարածքների Հայկական ԽՍՀ հետ վերականգնելու

[30] Ленин, *Сочинения*, (Լենին, երկեր), 2րդ հրատ., Լենինկրատ, հտր. 22, 1926, էջ 311 (Քոչինեանի արխիւ, յուժ գաղտնի, ԽՄԿԿ 23րդ համագումարին, բ/մ 3443):

վերաբերեալ մեր յայտարարութիւնը հանդիսանում է ողջ հայ ժողովրդի, բոլոր աշխատաւոր հայերի ցանկութիւնը: Նրանց անունից էլ մենք դնում ենք մեր ստորագրութիւնները յայտարարութեան ներքոյ:
Մ[արտիրոս] Ս. Սարեան, Գ. Մ. Գիւրդակեան, Գ. Մ. Գասպարեան, Ս[երօ] Խանզադեան ....[31]

Եւ այսպէս 46 ստորագրութիւններ: Այս նամակի կապակցութեամբ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարութիւնը յանձնարարել է ՀԿԿ քարտուղար Ա. Քոչինեանին, Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Բ[ադալ] Մուրադեանին վերանայել 23րդ համագումարին Հայկական ԽՍՀ գիտութեան եւ մշակոյթի մի խումբ գործիչների գրած նամակը: Այն վերանայելուց յետոյ Քոչինեանը եւ Մուրադեանը պատասխան նամակ են յղում ԽՄԿԿ կենտկոմին, որտեղ հանգամանօրէն հիմնաւորում են մտաւորականների նամակը՝ տնտեսական, քաղաքական հոչակագրերով, պայմանագրերով, էթնիկական դրոյթներով: Նրանք նշում են, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ընդգրկելու միակ պատճառաբանութիւնը բնակչութեան տնտեսական կախուածութիւնն էր Բաքուից, սակայն դա չէր կարող լինել գլխաւոր պայման: Այդ կապակցութեամբ մօտ 40 տարի յետոյ, 1966 Սեպտեմբերի 30ին նօ. 120 գրութեամբ պատասխան նամակում Քոչինեանը եւ Մուրադեանը գրում են.

ա/ Այսօր այդ միակ անհամոզիչ փաստարկը հանուած է, քանի որ Հայաստանը խորհրդային իշխանութեան տարիներին ռուս ժողովրդի օգնութիւնը ստանալով, դարձել է Խորհրդային Միութեան արդիւնաբերական ճարտարարուեստական առաջատար պետութիւններից եւ այժմ ի վիճակի է ինքը լիովին լուծել Լեռնային Ղարաբաղի տնտեսական հարցերը: բ/ 40 տարի մնալով Ադրբեջանի կազմում, կարելի է հանգիստ ասել, որ որեւէ կերպ դա չի նպաստել Լեռնային Ղարաբաղի տնտեսական եւ մշակութային զարգացմանը: Վիճակագրութիւնն ասում է, որ այդ շրջանում Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը չի աճել: Առաւել եւս հայ ազգաբնակչութիւնը վերջին 33 տարիների ընթացքում (1926 եւ 1959) նուազել է: Եթէ 1926ին Լեռնային Ղարաբաղում հաշւում էր 111,694 հայ, ապա 1959ին հաշւում էր 110,053 հայ: Այսօր էլ Ղարաբաղի բնակչութեան 85 տոկոսը հայեր են եւ այդ հիմքի վրայ ճանաչուել է որպէս ազգային ինքնավարութիւն: Տարածքային առումով մարզը կպած է (կից է) Հայաստանին եւ հանդիսանում է նրա օրգանական շարունակութիւնը: Այսպիսով, տարածքային խնդիրների լուծման որեւէ հարցում հիմնական փաստերը խօսում են ԼՂԻՄի Հայկական ԽՍՀին միացնելու օրինաչափութեան մասին: ...Ղարաբաղը Հայաստանին միացնելով լուծւում են մի շարք կարեւոր հարցեր՝ ա/Լիովին հասկանալի է, որ Ղարաբաղի արուեստը, տպագրութիւնը, ռադիոն, մշակութա-լուսաւորչական գործը, գեղարուեստական ինքնագործունէութիւնը աւելի լիարժէք կը դրսեւորուէին հայկական միջավայրում, բ/ Հայաստանն աւելի մեծ հնարաւորութիւն ունէր ուսուցչական պաշտօնէութիւն տրամադրել Ղարաբաղի բնակչութեան միջին եւ

[31] ՀՊԹ, նպֆ, մմ18816,բ/մ 3443 , ԽՄԿԿ 23րդ համագումարին, յուժ գաղտնի, էջ 14: Այս փաստաթղթի ամբողջական հրատարակութեանը չենք հանդիպել:

բարձր կրթական հաստատութիւններին... Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի կազմում յայտնուելը դնում է երկակի ոչ-բնականոն իրավիճակ հայ ժողովրդի համար, այն իմաստով, որ թուով քիչ հայ ժողովուրդը Խորհրդային Միութեան պայմաններում ունի 2 պետականութիւն, մէկը՝ Հայաստանի միութենական հանրապետութիւնը, միւսը՝ նրան կից ինքնավար ազգային մարզը, բայց այլ միութենական հանրապետութեան կազմում: Կարծում ենք հիմք չկայ զգուշանալ ոչ-ցանկալի արձագանգից, քանի որ հարցը ոչ թէ Ադրբեջանական ԽՍՀից մի ինչ որ մաս պոկելն է, այլ միաձուլումը ազգային ինքնավար մարզի միութենական հանրապետութեան հետ, որի հիմնական բնակչութիւնը միատարր հայկական է...Այս հարցի դրական լուծումը կ'ունենայ բացառիկ կարեւոր քաղաքական նշանակութիւն եւ կը վկայի մեր կուսակցութեան, ԽՄԿԿ ԿԿ քաղբիւրոյի իմաստուն ազգային քաղաքականութեան որոշման մասին...[32]:

Ելնելով վերոնշեալից, հաշուի առնելով առկայ վիճակը, ՀԿԿ Ա. քարտուղարը եւ Սովմինի նախագահը գտնում են ծայրայեղ անհրաժեշտ Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի վերադարձը Հայկական ԽՍՀին: Սակայն այստեղ շրջանցուել է 2 եղբայրական ժողովուրդների՝ հայերի եւ ադրբեջանցիների «բարեկամութեան» ամրապնդման հարցը:

Միեւնոյն ժամանակ հայ աշխատաւորութեան անունից Պրեժնեւին, Քոսիկինին եւ Ա. Միկոյեանին ուղղում է մէկ այլ գրութիւն 5501 ստորագրութիւն: Այնտեղ նորից կարմիր թէլի պէս անցնում են այն համոզիչ փաստարկները, որոնց կարծում ենք, եթէ պատկան մարմինները անդրադառնային հենց այդ տարիներին, լուծումը կը լինէր ոչ այդքան ցաւոտ 2 կողմի համար էլ, սակայն օրէօր բարդացող թնճուկը վաղ թէ ուշ պէտք է հանգեցնէր արցախահայերի պայքարին:

Այսպիսով, տասնամեակների հեռաւորութիւնից ՀԿԿ Ա. քարտուղարի արխիւում պահուող նիւթերը, փաստաթղթերը այս օրերին մեզ ասելիք ունեն, որոնց հնարաւոր չէ անուշադրութեան մատնել:

---

[32] Պատմական եւ տեղեկատուական նիւթեր խորհրդային կուսակցական եւ պետական գործիչների ելոյթներից եւ քաղուածքներ փաստաթղթերից, նօ 120, 1966թ. (Ա. Քոչինեանի արխիւ, բմ 3443): Տես ՀԱԱ, ֆ.1,ց.46, գ.65ա,թթ 1-9:

PAGES FROM THE ARCHIVE OF ANTON KOCHINIAN (1966-74)

(Summary)

SEDA GALSTYAN
sedagalstyan@yahoo.com

Anton Kochinian (1913-90) was the first secretary of the Communist Party of Soviet Armenia between 1966 and 1974. During his rule Soviet Armenia prospered in an unprecedented manner in the spheres of industry, housing, sciences and sociocultural life.

In fact, the era marked the development of the three countries of the Southern Caucasus and their shift to nationalism in line with significant growth in their industrial output.

Nationalism and economic growth, however, led to interstate and interethnic frictions as well as acute shortages in energy and a contest for acquiring energy supplies.

In this article based on disclosed documents from the archive of Kochinian, the author sheds light on several critical issues of the time, including the quest for energy and the proposal to build a nuclear plant in Soviet Armenia. Interethnic frictions and borderline conflicts are another topic which is detailed in this article, alongside the persecutions and policies adopted by the Soviet Azeri state to deter the economic development of the Autonomous Region of Mountainous Karabagh. Another interesting point is the false accusations of a minority Azeri youth about the persecution by the Soviet Armenian stateof the Azeri minority living in Soviet Armenia.

The attached documents are further evidence of the long-standing conflict between the two Soviet states concerning border lines, land and the indigenous rights of the Karabagh Armenians and the discrimination claims of the Azeris living in Armenia.